

Հավելված  
ՀՀ կառավարության 2021 թվականի  
հոկտեմբերի 28-ի N 1761- Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ  
ՀԻԴՐՈՖՏՈՐԱԾԽԱԾԻՆՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների (այսուհետ՝ կարգավորվող նյութեր) ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման հետ կապված հարաբերությունները:

2. Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառումն օրենսդրությամբ սահմանված ձևով և պարբերականությամբ պարտադիր ներկայացման ենթակա տարեկան հաշվետվության հաշվառման (այսուհետ՝ հաշվառում) գործընթացն է:

3. Հաշվառումն իրականացվում է մասնագիտական վերլուծության և ոլորտային քաղաքականության մշակման և իրականացման նպատակով:

4. Հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարողների կողմից գրությամբ ներկայացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ լիազոր պետական մարմին) մինչև հաջորդ տարվա փետրվարի 25-ը՝ համաձայն «Օզոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի:

5. Հաշվետվությունը կարող է ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունն ուղարկվում է լիազոր պետական մարմնի պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

6. Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառումն իրականացնում է լիազոր պետական մարմնի համապատասխան ստորաբաժանումը՝ լիազոր մարմնի կողմից սահմանված գրանցամատյանի վարման միջոցով:

7. Անճշտություններ և վրիպակներ պարունակող հաշվետվությունները լիազոր պետական մարմնի կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտին հետ են վերադարձվում՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում վրիպակները շտկելու, վերացնելու և սահմանված կարգով կրկին լիազոր պետական մարմին ներկայացնելու համար:

8. Հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե լիազոր պետական մարմինը սույն կարգի 7-րդ կետում նշված ժամկետում հետ չի վերադարձնում հաշվետվությունը կամ տնտեսավարողի կողմից վրիպակները շտկած, վերացրած տարբերակին գրավոր չի պատասխանում հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

9. Տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հաշվառման ենթակա հաշվետվությունը չներկայացնելու դեպքում՝ լիազոր պետական մարմինն այդ մասին ծանուցում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում անհրաժեշտ գործառույթներ իրականացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ